Հաստատում եմ
Տնօրեն Գ.ՄԵԼԻՔ-ՍՏԵՓԱՆՅԱՆ



ԵՐԵՎԱՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՆՎԱՆ Հ.168 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՓՈԽՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԻՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024 ՈՒ ՍՏԱՐԻ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

Բովանդակություն

1. *Դպրոցի համապարփակ ընդհանուր բնութագիրը 3*
2. *Ուսումնական աշխատանքի գծով փոխտնօրենի աշխատանքի բովանդակությունը 4*
3. *Ուսումնական աշխատանքի գծով փոխտնօրենի տարեկան աշխատանքային պլանը 5*
4. *Ուսումնական աշխատանքի գծով փոխտնօրենի օրացույցային աշխատանքի պլանը 6*
5. *Գործնական փաստաթղթերի վերահսկում եւ վերլուծություն 17*
6. *Տարրական դասարանների աշխատանքների վերահսկողություն 17*
7. *Ուսումնադաստիարակչական աշխատանքների վերահսկողություն 18*

ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երևանի Վազգենի թիվ 168 հիմնական դպրոցը գտնվում է Աջափնյակ համայնքի Բաշինջաղյան 1-ին նրբանցքում: Հաստատությունը գործում է կրթության որակի բարձրացման հստակ հանձնառությամբ, նպատակ, որը կիսում են հանրակրթության ոլորտում բոլոր շահագրգիռ կողմերը: Այս նպատակին կարելի է հասնել միայն համակարգված մոտեցման միջոցով, որը ներառում է շարունակական գնահատում, ծրագրի վերանայում և բարելավման հնարավորություններ: Դպրոցի աշխատանքային ծրագրի մշակումն առաջնորդվել է տարբեր առանցքային փաստաթղթերով, այդ թվում՝ «Հանրակրթության մասին» օրենքի, դպրոցի 2023–2024 ուստարվա ՈՒԴԱՏՊ–ի, 2022–2023 ուստարվա ՆԳ–ան և տնօրենի կողմից մշակված դպրոցի զարգացման հնգամյա ծրագրի բովանդակությամբ:[1]

Դպրոցի տնօրեն՝ Մելիք-Ստեփանյան Գոհար, ուսումնական աշխատանքի գծով 3 փոխտնօրեն՝ Աբրահամյան Սվետլանա, Մկրտչյան Կարինա, Մադաթյան Գայանե, ՄԿԱ՝ Մովսիսյան Անահիտ:

Դպրոցում գործում է 8 առարկայական մեթոդական միավորում:

2023–2024 ուստարին հանրակրթության ոլորտի էական փոփոխության մեկնարկային ուստարին է, հետևաբար, դպրոցի աշակերտական համակազմի կրթությունն առավել բարձր մակարդակի իրականացնելու համար, նախ անհրաժեշտ է վերլուծական անդրադարձ ունենալ 2022–2023 ուստարվա ներքին գնահատման արդյունքներին:

[1] http://www.irtek.am/views/act.aspx?aid=150065

Նոր՝ 2023–2024 ուստարում իրավական ակտերով կարգավորվում են հանրակրթության ոլորտում բարեփոխումների անցումային դրույթները։ ՀՊՉ–ի ներդրումն առավել մեղմելու նպատակով 2,5, և 7–րդ դասարանների սովորողների ուսումնառությունը կազմակերպելու համար մշակվել է ուղեցույց,որի համաձայն էլ կազմվել է դպրոցի ուսպլանը։

2023-2024 ուսումնական տարվա 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների ուսումնական պլանն ունի երեք՝ պետական, դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչ։

Երանի հ.168 հիմնական դպրոցն իրականացնում է սովորողների միահերթ հաճախմամբ ուսուցում՝ հնգօրյա շաբաթական ռեժիմով։ Առաջին դասաժամն ազդարարվում է 08։30–ին։ Մեկ ակադեմիական դասաժամի տևողությունը 45 րոպե է։ Դպրոցական պարապունքների և դասամիջոցների ժամանակացույցը, դասարանների կահավորումը կազմվել է հնարավորինս պահպանելով ԱՆ պահանջը՝ «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը՝ համաձայն հավելվածի։[2]

Հաստատության (դպրոցի) ուսուցման լեզուն գրական հայերենն է։ Հաստատությունն ուսումնական գործընթացն իրականացնում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության սահմանած ՀՊՉ–ի և առարկայական ծրագրերի,ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների համաձայն։

Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, դասագրքերի և ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող այլ ուսումնական նյութերի համար։

Գործում է սովորողների ուսումնառության գնահատման 10 միավորային սանդղակ՝ 3–րդից 9–րդ դասարանում սովորողների համար։ 1–ին և 2–րդ դասարաններում միավորային գնահատում չի իրականացվում։ Անհատական (ընտրովի) բաղադրիչի ժամաքանակից պարտադիր ժամեր են հատկացվում «Առողջ ապրելակերպ» ուսումնական խմբակին (5-րդ և 7-րդ դասարաններ)։

[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112989

Հաստատության 7-րդ դասարանում յուրաքանչյուր սովորող տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից (առարկաներից)։

Բոլոր միավորները 1–10 գնահատման համակարգում դրական են՝ համապատասխան բնութագրիչներով։

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող)։[3]

Սովորողի գնահատման չափանիշերը սահմանված են ԿԳՄՍ նախարարի 24.02.2023թ. N11–Ն հրամանով։

2023–2024 ուսումնական տարում հաստատությունում ուսումնական պարապմունքները սկսվում է 2023թ.–ի սեպտեմբերի 1–ին և ավարտվում 2024թ.–ի մայիսի 24–ին։ [4]

2023-2024 ուսումնական տարիների համար

Դասարաններ	Աշնանային	Ձմեռային	Գարնանային
1-ին դասարան	2023 թ. հոկտեմբերի 16-ից 29-ը ներառյալ:	2023 թ. դեկտեմբերի 25-ից մինչև 2024 թ. հունվարի 21-ը ներառյալ:	2024 թ. մարտի 18-ից մարտի 31-ը ներառյալ:
2-րդ դասարան	2023 թ. հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ:	2023 թ. դեկտեմբերի 25-ից մինչև 2024 թ. հունվարի 21-ը ներառյալ:	2024 թ. մարտի 25-ից մարտի 31-ը ներառյալ:
3-9-րդ դասարան	2023 թ. հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ:	2023 թ. դեկտեմբերի 25-ից մինչև 2023 թ. հունվարի 7-ը ներառյալ:	2024 թ. մարտի 25-ից մարտի 31-ը ներառյալ:

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇԱԲԱԹՆԵՐԸ ԸՍՏ ՕՐԵՐԻ

[3] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=174760

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docID=180914

5-օրյա

N	1-ին կիսամյակ	2-ին կիսամյակ
I դասարան	14 շաբաթ 1 օր	16 շաբաթ
II դասարան	15 շաբաթ 1 օր	17 շաբաթ
III-IX դասարաններ	15 շաբաթ 1 օր	19 շաբաթ

Խտությունը տարրական և միջին դպրոցում կազմում է 25-34 սովորող, միջին դպրոցում՝ 25-30 սովորող:
Տարրական դպրոցում՝ 1-4-րդ դասարաններ, ուսումնասիրում են «Ռուսաց լեզու», «Անգլերեն» առարկաները: Միջին դպրոցում «Հայոց լեզու» (7-9-րդ դասարաններ), «Ռուսաց լեզու», «Անգլերեն, ֆրանսերեն» (5-9-րդ դասարաններ), «Ինֆորմատիկա» (6-9-րդ դասարաններ), 8-9-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» դասընթացը:
Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, ըստ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N846-Ն հրամանով հաստատված կարգի:

2023-2024 ուստարում ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու, ուսման որակը բարձրացնելու նպատակով կարևորում ենք հետևյալ կետերը:

1.Սահմանել էլեկտրոնային մատենավարության պատշաճ վարման վերահսկողություն:

2.Հանձնարել ուսուցիչներին լրացուցիչ աշխատանք տանել թույլ և չառաջադիմող սովորողների հետ: Վերահսկել երկարօրյա խմբերի և խմբակների աշխատանքները:

3. Տնօրենի հետ համատեղ ղեկավարել մ/մ աշխատանքները:

4. Պահպանել դասալսումների քանակը՝ շաբաթական միջինը 4 ժամ:

5. Մանկավարժական աշխատանքները իրականացնել պետական չափորոշիչներով առաջադրված խնդիրներին համապատասխան և նպաստել սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:

6. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության ապահովում անհատական ուսուցման պլանի (ԱՈՒՊ) համաձայն:

7. Շարունակել համագործակցությունը 3-րդ և 4-րդ դասարանների աշակերտների համար «Zartnir»- ծրագրի հետ: Այս համագործակցությունը խթանում է սերը դեպի ընթերցանություն:

8. Դասարաններում կազմակերպել գրքի քննարկում՝ համագործակցելով ուսուցչի հետ:

Հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթությունը կազմակերպվում է հաստատության կողմից հաստատված ուսումնական պլանների հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար, կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ):

1. Ուսումնական աշխատանքի գծով փոխտնօրենի աշխատանքի բովանդակությունը

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ

1. Պաշտոնային պարտականությունները.

1) պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական
գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի կատարման,
դասավանդման որակի և սովորողների՝ կրթական չափորոշիչներով
սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն
պարտադիր նվազագույն մակարդակի ապահովման համար:

2) հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի
ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ,
կանոնակարգում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը.

3) ուսումնական հաստատության տնօրենի հետ համատեղ իրականացնում է
հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական

ղեկավարումը, ապահովում է կրթության պետական կառավարման լիազորված
մարմնի և տարածքային կառավարման մարմնի՝ Հայաստանի
Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների
կատարումը.
4) կազմում է ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի
մասին հաշվետվություններ.
5) ղեկավարում է տարրական դասարանների ՄՄ աշխատանքները,
ընդհանրացնում և տարածում մանկավարժական աշխատանքի
արդյունավետ
փորձը, աջակցում է ուսուցման նոր մեթոդների ներդրմանը, ուսուցիչներին
հաղորդակից դարձնում գիտության և մանկավարժության նորագույն
նվաճումներին.
6) կազմակերպում է սովորողների ուսումնական պարապմունքների
հսկողություն: Ներկայացնում է առաջարկություններ
ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման
ուղղությամբ:
7) հսկում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին
իրավա-
կան ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջների
կատարումը:

2. Տարրական դասարանների ուսումնական աշխատանքի գծով փոխտնօրենի տարեկան աշխատանքային պլան

Հ/հ	Աշխատանքի բովանդակություն
1.	Ստուգել և ներկայացնել տնօրենի հաստատման դասվարների թեմատիկ ծրագրերը տալ համապատասխան հանձնարարությունները:
2.	Յուրաքանչյուր ամսվա վերջում անցկացնել առարկայական մ/մ ղեկավարի սեմինար խորհրդակցություն: Մ/մ նախագահի հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլանում կատարել փոփոխություններ: Քննարկել մեթոդամանկավարժական անհրաժեշտ հարցեր:
3.	Ապահովել տարրական դասարաններում դասավանդվող առարկաների դասավանդման մեթոդիկաների տիրապետումը

	ուսուցիչների կողմից:
4.	Ապահովել դասերի կազմակերպումը ըստ դասացուցակի և ժամանակացույցի:
5.	Հետևել տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների աշխատանքի ընթացքին և ապահովել նրանց կողմից առարկաների դասավանդման մեթոդիկայի պահանջների պահպանմանն ուղղված աշխատանքների կատարմանը:
6.	Տարրական դասարանների մ/մ տարեկան պլանի կատարողականի և վերլուծություն:
7.	Ապահովել տարրական դասարաններում մ/մ անդամների կողմից ուսուցիչների դասավանդման որակի նկատմամբ վերահսկողություն և վերլուծություն:
8.	Ապահովել տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման իրականացումը. 1) դասի նպատակի ճիշտ սահմանում 2) դասի խնդիրների ճիշտ սահմանում 3) դասի ընթացքում կիրառվող մեթոդների ճիշտ ընտրություն 4) աշակերտների գնահատում 5) շերտավոր ուսուցում 6) տնային աշխատանքի հանձնարարում 7) ժամանակացույցի պահպանում
9.	Ապահովել դասերի վերահսկողություն դասալսումների միջոցով. 1) դասալսման նպատակի ճիշտ սահմանում 2) դասալսման մեթոդի ընտրություն 3) դասի վերլուծություն 4) դասի վերլուծության պահանջների կատարման ստուգում դասալսման արդյունավետության գնահատում
10.	Ապահովել գնահատման մեթոդաբանության ճիշտ կիրառությունը. 1) տիրապետել գնահատման մեթոդաբանությանը 2) գնահատման համապատասխանությունը 3) Էլ. Դասամատյանում գրանցումները
11.	Հսկել կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և իրավական ակտերով սահմանված պահանջների կատարմանը:
12.	Անցկացնել տարրական առարկայական մեթոդական միավորման նիստեր առնվազն տարին մեկ անգամ և հետևել արձանագրմանը:
13.	Ապահովել սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն նվազագույն մակարդակը / առարկայական թեմատիկ պլանները կազմել չափորոշիչների և ծրագրերի պահանջներին համապատասխան/

2023-2024

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ

N	**Առարկայական մեթոդմիավորումներ**	**Նախագահ**
1	Պատմահայագիտական	Խոստեկյան Հ.
2	Ռուսաց լեզու	Ստեփանյան Լ.
3	Անգլերեն, ֆրանսերեն	Քամալյան Ն.
4	Մաթեմատիկա, ինֆորմատիկա, ԹԳՀԳ	Անդրեասյան Ա.
5	Տարրական կրթություն	Դարբինյան Ա.
6	ԲՏՃ-Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, տեխնոլոգիա, շախմատ, բնագիտություն, բնություն	Վարդանյան Ա.
7	Արվեստ և արհեստ-կերպարվեստ, երաժշտություն, ազգային երգ և պար	Հայրապետյան Ց.
8	Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն	Մարգարյան Ա.

13.Տարրական դասարանների ուսումնական աշխատանքի գծով փոխտնօրենի օրացույցային աշխատանքի պլանը

Աշխատանքի բովանդակությունը	Նպատակը	Վերահսկողության մեթոդը
Օգոստոս		
Առաջին դասարանցիների ընդունելություն		
1-4-րդ դասարանների լրակազմություն /կոմպլեկտավորում/	ՀՀ «Կրթության մասին» օրենքի և դպրոցի ընդունելության կարգի պահպանում	Փաստաթղթերի ուսումնասիրություն
Հանրակրթական պետական չափորոշչի դրույթների ուսումնասիրում	Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի ապահովում	Ուսումնասիրել չափորոշիչը
Տարրական դասարանների ՄՄ և ուսուցիչների տարեկան աշխատանքային պլանների ստուգում և հաստատում	Տարեկան աշխատանքային պլանների որակական չափանիշների սահմանում	Աշխատանքային ծրագրերի ստուգում
Առարկայական թեմատիկ պլանների ստուգում, փոփոխությունների կատարում և հաստատում	Ուսուցիչների կողմից իրականացնել պետական կրթական ծրագրերին և չափորոշիչներին համապատասխան կրթություն	Առարկայական թեմատիկ պլանները ստուգելիս, որպես գործիք կիրառել ուսպլանը, չափորոշիչները, ծրագրերը և դասագրքերը
Տարրական դասարանների ՄՄ նիստերի կազմակերպում	Ուսուցիչների հանձնարարականների հստակեցում	ՄՄ նիստերի կազմակերպում
Հանդիպում 4-րդ և 5-րդ դասարաններում դասավանդողող ուսուցիչների հետ	Տարականից միջին դասարանների անցման խնդիրների քննարկում	Դասալսում
Սեպտեմբեր		
Աշխատանքի	**Նպատակը**	**Վերահսկողության**

բովանդակությունը		**մեթոդը**
Աշխատանք աշակերտների անձնական տվյալների ուղղությամբ	Դասվարների կողմից աշակերտների անձնական գործերի կազզման ճշգրտության ստուգում	Անձնական գործերի և գրանցամատյանի ստուգում
1-4- րդ դասարանների Դասվարների դասամատյանների գործունեության ստուգում	Վերահսկողություն՝ դասամատյանների լրացման ուղղությամբ	Դասամատյանների ուսումնասիրություն
Մանկավարժների գործունեության վերահսկողություն՝ աշակերտների իրավունքների պահպանման ուղղությամբ	Առարկաների օրվա պլանների որակական չափանիշների սահմանում	Օրվա պլանների ստուգում
Սկսնակ ուսուցիչների գործունեության վերահսկողություն	Սկսնակ ուսուցիչներին մեթոդական աջակցության և մասնագիտական մակարդակի գնահատում	Դասալսումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն
Տարրականից միջին դպրոցի անցում	Վերահսկել տարրականից միջին դպրոցի անցման դժվարություններն ու խնդիրները	Մշտադիտարկում 5-րդ դասարաններում
Մշտադիտարկում 2-4-րդ դասարաններում	Տնային աշխատանքների չափի և բովանդակության վերահսկողություն	Դասալսում, ընթացիկ տետրերի ստուգում
Սեմինար «Ինքնուրույ ընթերցանության կազմակերպումը տարրական դասարաններում»	2-4 դասարաններում իրականացնել չափորոշչահեն կրթություն և պահպանել Ի/Ը կազմակերպման փուլերը	Սեմինարի կազմակերպում
Հոկտեմբեր		
Աշխատանքի բովանդակությունը	**Նպատակը**	**Վերահսկողության մեթոդը**

Սկսնակ ուսուցիչների գործունեության վերահսկողություն և օգնություն	Սկսնակ մասնագետներին տրվող մեթոդական աջակցության և մասնագիտական մակարդակի գնահատում, ինչպես նաև դասապրոցեսում կիրառվող մեթոդների և հմտությունների շտկում	Դասալսումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն
Վերահսկել տետրերի վարման գործընթացը /մայրենի, մաթեմատիկա, ռուսաց լեզու, անգլերեն/	Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վերհանում	2-4 -րդ դասարանների աշակերտների տետրերի վարման, տնային աշխատանքների ծավալի և բովանդակության ստուգում
Ստուգել տարր. դասարաններում դասավանդող տեխնոլոգիա, կերպարվեստ, երաժշտություն առարկաների ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման իրականացումը	Ապահովել. 1) դասի նպատակի ճիշտ սահմանում 2) դասի խնդիրների ճիշտ սահմանում 3) դասի ընթացքում կիրառվող մեթոդների ճիշտ ընտրություն 4) աշակերտների գնահատում 5) շերտավոր ուսուցում	Օրվա պլանների ստուգում՝ տեխնոլոգիա, կերպարվեստ, երաժշտություն
Մանկավարժների գործունեության ստուգում՝ թեմատիկ գրավոր աշխատանքներին համապատասխան	Թեմատիկ գրավոր աշխատանքների գնահատման օբեկտիվություն	Բոլոր առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների վերահսկողություն
Նոյեմբեր		
Աշխատանքի	**Նպատակը**	**Վերահսկողության**

բովանդակությունը		**մեթոդը**
Սովորողների գիտելիքների որակը բարելավվելու նպատակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել մասնախմբի և մանկխորհրդի նիստերում	Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ցույց տալ ուսուցիչներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով նոր ինտերակտիվ մեթոդների կիրառմանը աշակերտակենտրոն դասապրոցեսին	Դասալսումներ / անգլերեն 4-րդ դասարան/
Ես և շրջակա աշխարհը առարկայի դրվածքի ստուգում 4-րդ դասարաններում	Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի ստուգում	Գրավոր աշխատանք տնօրինության կողմից
Թեմատիկ գրավոր աշխատանքների կազմում, ստուգում և քննարկում:	Տիրապետել թեստերի կազման սկզբունքներին:	Ստուգել թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակությունը
Ստուգել տարր. դասարաններում դասավանդող ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման իրականացումը	Ապահովել. 1.դասի նպատակի ճիշտ սահմանում 2.դասի ընթացքում կիրառվող մեթոդների ճիշտ ընտրություն 3.գնահատում 4.շերտավոր ուսուցում 5.տնային աշխատանքի հանձնարարում	Օրվա պլանների ստուգում
Փոխադարձ դասալսումներ	Հետևել փոխադարձ դասալսումների ընթացքին	Փոխադարձ դասալսումների մատյանների ստուգում
Երկարօրյա խմբակի վերահսկողություն	Երկարօրյա խմբակի դերը դպրոցում	Ստուգել խմբակի ճիշտ կազմակերպումը
Ընթերցանության մրցույթ	Գիտելիքով հարուստ և ընթերցասեր աշակերտին օրինակ դարձնել իր շրջապատի համար	2-րդ և 4-րդ դասարանների աշակերտների միջև ացկացնել մրցույթ
Ստուգել ընթերցանության տեխնիկան 2-4-րդ դասարաններում:		

Դեկտեմբեր		
Աշխատանքի բովանդակությունը	**Նպատակը**	**Վերահսկողության մեթոդը**
Պետական չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպման վերահսկողություն տարվա ընթացքում	Ուսումնական պլանների գործնական մասի իրականացում(թեմ. գրավ, գործ. աշխատանքներ, կիս. գրավորներ), թեմատիկ պլանների և մատյանների միջև համապատասխանության վերահսկողություն	Դասամատյանների, փաստաթղթերի ուսումնասիրություն
Վերահսկել տետրերի վարման վիճակը /մայրենի, մաթեմատիկա, անգլերեն, ռուսերեն /	Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վերհանում	2-4 –րդ դասարանների աշակերտների տետրերի վարման, տնային աշխատանքների ծավալի և բովանդակության ստուգում
4-րդ դասարաններում գրավոր աշխատանքներ	Ստուգել աշակերտների գիտելիքների համապատասխանությունը պետական չափորոշիչներին	4-րդ դասարաններում գրավոր աշխատանքներ անգլերեն առարկայից
Տարրական դասարանների տասնօրյան		
Ընթերցանության մրցույթ	Գիտելիքով հարուստ և ընթերցասեր աշակերտին օրինակ դարձնել իր շրջապատի համար:	3-րդ և 4-րդ դասարանների աշակերտների միջև անցկացնել մրցույթ:
Ստուգել	Պարզագույն հաղորդակցվելու կարողությունը ռուսաց լեզվից և անգլերենից	4-րդ դասարաններում
Հունվար		
Աշխատանքի	**Նպատակը**	**Վերահսկողության**

Բովանդակությունը		**Մեթոդը**
Առաջին կիսամյակի արդյունքների և կատարած աշխատանքների ամփոփում	Կատարել անդրադարձ	Հաշվետվություն
Սկսնակ մանկավարժների գործունեության որակի և արդյունավետության գնահատում	Երիտասարդ մանկավարժների գործունեության որակի ու արդյունավետության գնահատում, մեթոդական օժանդակության ցուցաբերում	Դասալսումներ, զրույցներ, ստուգումներ
Ծրագրերի կատարողականի ստուգում	Առարկայական թեմատիկ պլանների և մատենավարության համապատասխանություն	Էլ.դասամատյան-ների ստուգում
Ստուգել տարր. դասարաններում դասավանդող ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման իրականացումը	Ապահովել. 1.դասի նպատակի ճիշտ սահմանում 3.դասի ընթացքում կիրառվող մեթոդների ճիշտ ընտրություն 4.աշակերտների գնահատում 5.շերտավոր ուսուցում 6.տնային աշխատանքի հանձնարարում	Օրվա պլանների ստուգում
3-րդ դասարաններում գրավոր աշխատանքներ	Ստուգել աշակերտների գիտելիքների համապատասխանությունը պետական չափորոշիչներին	3-րդ դաս. գրավոր աշխատանքներ ռուսաց լեզու առարկայից
Օլիմպիադա <<Ուզում եմ ամեն ինչ իմանալ>>	Խրախուսել առարկաների նկատմամբ հետաքրքրությունը և հայտնաբերել տաղանդավոր աշակերտներ	3-րդ և 4-րդ դասարաններում
Խաղ-վիկտորինա 4-րդ դաս. միջև ռուսաց լեզու առարկայից	Խրախուսել ռուսաց լեզու առարկայի նկատմամբ հետաքրքրությունը	Կազմակերպել ներդասարանային և միջդասարանային մրցույթներ
Փետրվար		

Աշխատանքի բովանդակությունը	Նպատակը	Վերահսկողության մեթոդը
1-ին կիսամյակում չառաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքների պլանավորում:	Իրականացնել անհատական աշխատանք չառաջադիմող աշակերտների հետ՝ չափորոշչի նվազագույն մակարդակի ապահովում	Կազմել անհատական ժամանակացույց չառաջադիմող աշակերտների համար
Ուսուցիչների կողմից դասամատյանների՝ միասնական կարգով լրացման վերահսկողություն	Դասամատյանների միասնական կարգով լրացման վերահսկողություն	Դասամատյանների ստուգում
Ստուգել տարր. դասարաններում դասավանդող ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման իրականացումը	Ապահովել. 1.դասի նպատակի և խնդիրների ճիշտ սահմանում 3.դասի ընթացքում կիրառվող մեթոդների ճիշտ ընտրություն 4.աշակերտների գնահատում 5.շերտավոր ուսուցում 6.տնային աշխատանքի հանձնարարում	Օրվա պլանների ստուգում
Թեմատիկ գրավոր աշխատանքների կազմում և ստուգում	Տիրապետել թեստերի կազման սկզբունքներին:	Ստուգել թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակությունը:
2-4-րդ դասարաններում գրավոր աշխատանքներ	Ստուգել աշակերտների գիտելիքների համապատասխանությունը պետական չափորոշիչներին:	2-4-րդ դասարաններում գրավոր աշխատանք մայրենի առարկայից
Փետրվարի 21-ին կատարել միջոցառում Մայրենիի օրվան նվիրված	Միջոցառումը նպատակ ունի տոնել և հարգել ազգի ժառանգությունը, պատմությունը և մշակութային ինքնությունը:	Աշակերտները կարտասանեն մայրենիին նվիրված բանաստեղծություններ և կնվիրեն գրքեր դպրոցի գրադարանին և միմյանց:
Մարտ		

Աշխատանքի բովանդակությունը	Նպատակը	Վերահսկողության մեթոդը
Ուսուցիչների կողմից դասամատյանների՝ միասնական կարգով լրացման վերահսկողություն	Դասամատյանների միասնական կարգով լրացման վերահսկողություն	Դասամատյանների ստուգում
Թեմատիկ գրավոր աշխատանքների կազմում և ստուգում	Տիրապետել թեստերի կազման սկզբունքներին: 1.Առաջադրանքների քանակը 2.Առաջադրանքներին տրվող միավորները	Ստուգել թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակությունը
Վերահսկել տետրերի վարման վիճակը /մայրենի, մաթեմատիկա, ռուսաց լեզու, անգլերեն/	Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վերհանում	2-4 -րդ դաս. աշակերտների տնային աշխատանքների ծավալի և բովանդակության ստուգում
Ստուգել տարր. դասարաններում դասավանդող ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման իրականացումը	Ապահովել. 1.դասի նպատակի ճիշտ սահմանում 2.դասի խնդիրների ճիշտ սահմանում 3.դասի ընթ. կիրառվող մեթոդների ճիշտ ընտրություն	Օրվա պլանների ստուգում
2-4-րդ դասարաններում գրավոր աշխատանքներ	Ստուգել աշակերտների գիտելիքների համապատասխանությունը պետական չափորոշիչներին	3-4-րդ դասարաններում գրավոր աշխատանք մաթեմատիկա առարկայից
Ինտելեկտուալ-խաղ «Ամենախելացին» 4-րդ դասարաններում	Խթանել ուսման նկատմամբ հետաքրքրությունը և հայտնաբերել տաղանդավոր աշակերտներին	Ուսումնական տարվա ընթացքում 4-րդ դասարաններում իրականացնել ինտելեկտուալ մրցույթներ, որի արդյունքում կընտրվեն 12 աշակերտ:
Ապրիլ		
Աշխատանքի բովանդակությունը	Նպատակը	Վերահսկողության մեթոդը

Ստուգել տարր. դասարաններում դասավանդող ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման իրականացումը	Ապահովել. 1.դասի նպատակի և խնդիրների ճիշտ սահմանում 3.դասի ընթացքում կիրառվող մեթոդների ճիշտ ընտրություն 4.աշակերտների գնահատում 5.շերտավոր ուսուցում 6.տնային աշխատանքի հանձնարարում	Օրվա պլանների ստուգում
Թեմատիկ գրավոր աշխատանքների կազմում և ստուգում	Տիրապետել թեստերի կազման սկզբունքներին: 1.Առաջադրանքների քանակը 2.Առաջադրանքներին տրվող միավորները 3.Առաջադրանքների բովանդակության համապատասխանությունը չափորոշչային պահանջներին	Ստուգել թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակությունը
Ցածր առաջադիմություն ցուցաբերած 2-4-րդ դասարաններում ստուգել աշակերտների գիտելիքների համապատասխանությունը պետական չափորոշիչներին: Դասվարներին հանձնարարել կատարել անհատական աշխատանք ցածր առաջադիմություն ցուցաբերած աշակերտների հետ:	Ներքին գնահատման արդյունքները համեմատել նախորդ կիսամյակի գնահատականների հետ	Տարրական դպրոցի 2-4 դասարաններում տնօրինության կողմից անցկացնել ներքին ընթացիկ գնահատում մաթեմատիկա և մայրենի առարկաներից
Կլոր սեղան ուսուցիչների հետ	Կատարել քննարկումներ, մասնագիտական որակը բարձրացնելու համար	Ուսումնական տարվա ընթացքում կատարել դասալսումներ
Դասերի վերահսկողություն դասալսումների միջոցով Մրցույթ «պատանի մաթեմատիկոս» 4-րդ դասարանցիների միջև	Պարբերաբար ստուգել ուսուցիչների պատրաստվածությունը դասերին Գիտելիքի ստուգում	Դասալսում Տնօրենություն

Նախապատրաստել և անցկացնել «կենգուրու», «медвежонок»,«մեղու» միջազգային մրցույթները	Գիտելիքի ստուգում	Տնօրենություն
	Մայիս	
Աշխատանքի բովանդակությունը	Նպատակը	Վերահսկողության մեթոդը

Մանկավարժների կատարողականի հաշվետվությունների ներկայացում	Ուսուցիչների կողմից կատարողականի վերլուծություն՝ պետական ծրագրերի առարկայական ուսումնական պլանին համապատասխան	Դասամատյանների ստուգում
Ստուգել տարր. դասարաններում դասավանդող ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման իրականացումը	Ապահովել. 1.դասի նպատակի և խնդիրների ճիշտ սահմանում 3.դասի ընթացքում կիրառվող մեթոդների ճիշտ ընտրություն 4.աշակերտների գնահատում	Օրվա պլանների ստուգում
Տարրական դասարանների տասնօրյան		
Ստուգել ընթերցանության տեխնիկան	Ստուգել աշակերտների կիրթ և գրագետ խոսքը	
4-րդ դասարաններում անցկացնել ներքին գնահատում անգլերեն և ռուսաց լեզու առարկաներից	Աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատում	Գրավոր աշխատանք տնօրինության կողմից
Ժամանակին կազմել և հաստատել գիտելիքների ստուգման հանձնաժողովը և կարգացուցակը:	Գիտելիքների ստուգում 4-րդ դասարանում	Տնօրենություն
Հունիս		
Աշխատանքի բովանդակությունը	Նպատակը	Վերահսկողության մեթոդը
Դասվարների կողմից աշակերտների անձնական գործերի լրացման և վարման գործունեության	Աշակերտների անձնական գործերի հետ կապված դասվարների	Աշակերտների անձնական գործերի ստուգում

ստուգում	աշխատանքների կազմակերպում	
Ուսումնական գործընթացի արդյունավետության վերլուծություն	1-4-րդ դասարանների աշակերտների ուսումնական մակարդակի վերլուծություն	Ուսումնական տարվա ընթացքում բոլոր ոլորտներում վերլուծական նյութերի հիման վրա եզրակացություն
Տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների և ՄՄ կատարած աշխատանքների վերլուծություն	Ուսուցիչների կողմից կատարողականի վերլուծություն պետական ծրագրերի, առարկայական ուսումնական պլանի, թեմատիկ պլանի, տարեկան աշխատանքային պլանին համապատասխան	հաշվետվություն
Ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ	Կարևորել ուսուցիչների վերապատրաստման դասընթացները: Շահագրգռել ուսուցիչներին մասնակցել այդ դասընթացներին: Բարելավել ուսուցիչների մեթոդամանկավարժական պատրաստվածության բարձրացման ուղությամբ տարվող աշխատանքները:	Դասընթացների կազմակերպում

3. Գործնական փաստաթղթերի վերահսկում եւ վերլուծություն

h/h	Գործունեություն	08	09	10	11	12	01	02	03	04	05	06
1	Երիտասարդ և անփորձ ուսուցչների մեթոդական օգնություն		X		X		X		X		X	
2	Աշակերտների հաճախումների ստուգումը		X	X	X	X	X	X	X	X	X	
3	Դասամատյանների գրանցումների վերահսկում		X	X	X	X	X	X	X	X	X	X
4	Աշակերտական տետրերի, օրագրերի, գործնական և թեմատիկ աշխատանքների ստուգում		X	X	X	X	X	X	X	X	X	
5	Առարկայական թեմատիկ պլանների կատարողականի ստուգում					X						X
6	Մանկավարժական ընթերցումներ, զեկույցներ, սեմինարներ			X	X		X	X	X	X		
7	Բաց թողնված և փոխարինված ժամերի հաշվառում		X	X	X	X	X	X	X	X	X	

4. Տարրական դասարանների ՄՄ մասնախմբի աշխատանքների վերահսկողություն

h/h	Գործունեություն	08	09	10	11	12	01	02	03	04	05	06
1	Մասնախմբի նիստ	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
2	Բաց դասեր			X	X	X	X	X	X	X	X	
4	Մանկավարժական լսումներ , փորձի փոխանակում /փոխադարձ դասալսում/		X	X	X	X	X	X	X	X	X	

6	Առարկայական գրավոր աշխատանքներ տնօրինության կողմից				X	X		X	X	X		
7	Դիդակտիկ նյութերի ապահովում	X	X									
8	Դասալսումներ, քննարկումներ		X	X	X	X	X	X	X	X	X	

6.Առարկայական միամսյակներ

Առարկա	Ժամկետ
Գեղագիտական	Սեպտեմբեր
Բնագիտական	Հոկտեմբեր
Օտար լեզուներ	Նոյեմբեր
Ռուսաց լեզու	Դեկտեմբեր
Հայոց լեզու և գրականություն	Հունվար
Մաթեմատիկական	Փետրվար
Պատմաաշխարհագրական	Մարտ
Տարրական	Ապրիլ

7.Ուսուցմանադաստիարակչական աշխատանքների վերահսկողություն

Առարկա	Թեման	Ժամանակը	Դասարան	Պատասխանատու
Ֆիզկուլտուրա	Նորմատիվների հանձնում	Սեպտեմբեր, մայիս	4	Ուսուցիչ, փոխտնօրեն
Ես և շրջակա աշխարհը	Ես և շրջակայի դրվածքը դպրոցում	Նոյեմբեր	2-4	Ուսուցիչ, փոխտնօրեն
Անգլերեն	Լեզվի դրվածքը դպրոցում	Դեկտեմբեր, մայիս	3, 4	Ուսուցիչ, փոխտնօրեն
Ռուսաց լեզու	Լեզվի դրվածքը դպրոցում	Հունվար, մայիս	2,3, 4	Ուսուցիչ, փոխտնօրեն
Մայրենի	Թելադրություն առաջադրանքներով	Փետրվար	1-4	Դասվար, փոխտնօրեն

Մաթեմատիկա	Թեստային աշխատանք	Մարտ	2-4	Ուսուցիչ փոխտնօրեն
Մայրենի	Անծանոթ տեքստի ընթերցանություն	Մարտ	3, 4	Դասվար
Տեխնոլոգիա	Աշխատասիրության դաստիարակում /ցուցահանդես-վաճառք/	Ապրիլ	2-4	Ուսուցիչ փոխտնօրեն

8. Բաց դասեր

Հ/Հ	**Առարկա**	**Թեմա**	**ժամկետ**	**Դասարան**
1.	**Մայրենի**	**Ա տառի ծնունդը**	**Հոկտեմբեր**	**1-ին դասարան դասվարներ**
2.	**Մայրենի**	**<<Կարկուտ>>**	**Հոկտեմբեր**	**3-րդ դասարան**
3.	**Մայրենի**	**<<Հայաստանի հրաշալիքները>>**	**Հոկտեմբեր**	**4-րդ դասարան**
4.	**Մայրենի**	**<<Կապույտ տերևներ>>**	**Նոյեմբեր**	**2-րդ դասարան**
5.	**Մայրենի**	**<<Ժողովուրդը իմաստուն է>>**	**Նոյեմբեր**	**2-րդ դասարան**
6.	**Մայրենի**	**<<Լեզվական խաղեր>>**	**Նոյեմբեր**	**3-րդ դասարան**
7.	**Մայրենի**	**<<Օջախի հիմքը>>**	**Նոյեմբեր**	**4-րդ դասարան**
8.	**Մայրենի**	**<<Հայոց ուսուցիչ>>**	**Նոյեմբեր**	**4-րդ դասարան**
9.	**Մայրենի**	**<<Ծեր պապն ու թոռը>>**	**Դեկտեմբեր**	**2-րդ դասարան**
10.	**Մայրենի**	**<<Կաղինը>>**	**Դեկտեմբեր**	**4-րդ դասարան**
11.	**Մայրենի**	**<<Երկնքից երեք խնձոր ընկավ>>**	**Մարտ**	**2-րդ դասարան**
12.	**Մայրենի**	**<<Գարուն է եկել>>**	**Մարտ**	**2-րդ դասարան**

9. Հետազոտական

Հ/Հ	**Առարկա**	**Թեմա**	**ժամկետ**	**Դասարան**
1.	**Մայրենի**	**Իմ անունը**	**Սեպտեմբեր**	**1-րդ դասարան**
2.	**Մայրենի**	**Հայաստանի հրաշալիքները**	**Հոկտեմբեր**	**4-րդ դասարան**
3.	**Մայրենի**	**Հացը**	**Ուստարվա ընթացքում**	**2-րդ դասարան**
4.	**Ես և շրջակա աշխարհը**	**Ամանորը տարբեր երկրներում**	**Դեկտեմբեր**	**3-րդ դասարան**
5.	**Մայրենի**	**Հայրենիք, ես մի զարկնեմ քո բազկի**	**Փետրվար**	**3-րդ դասարան**

10. Նախագծային աշխատանքներ

Հ/Հ	Առարկա	Թեմա	Ժամկետ	Դասարան
1.	Մայրենի	Ժողովրդական բանահյուսություն	Նոյեմբեր	2-րդ դասարան
2.	Ես և շրջակա աշխարհը	Մեր բարեկամ կենդանիները	Մայիս	2-րդ դասարան

11. Գործնական դասեր

Հ/Հ	Առարկա	Թեմա	Ժամկետ	Դասարան
1.	Ես և շրջ.	Տեսնում եմ, լսում եմ, զգում եմ: Իմ դպրոցը, իմ դասարանը:	Սեպտեմբեր	
2.	Կերպարվեստ	Թռչնագիր	Հոկտեմբեր	
3.	Մաթեմատիկա	Չափումներ	Հոկտեմբեր	
4.	Մայրենի	Բաց արա թերթերդ, տեսնենք հրաշքներդ	Հոկտեմբեր	
6.	Մայրենի	Սուրբ Գեղարդ	Հոկտեմբեր	
7.	Կերպարվեստ	Աշնանային կոմպոզիցիա Աշունը բուսաբանական այգում	Նոյեմբեր	
8.	Մայրենի	Սասունցի Դավթի հետքերով Գաֆէսճեան արվեստի կենտրոն	Նոյեմբեր	
9.	Մայրենի	Առած ասացվածքներ	Ապրիլ	
10.	Մայրենի	Սասունցի Դավիթ Ազգային պատկերասրահ	Մայիս	
11.	Կերպարվեստ	Ծեփում	Մայիս	

12	Ես և շրջ.	Շրջայց Երևան քաղաքով	Մայիս	
13	Մայրենի	Էջմիածնի Մայր Տաճար, Զվարթնոցի Տաճար	Ուստարվա ընթացքում	

12.Ուսումնական էքսկուրսիաներ

Հ/Հ	Վայրը	Ժամկետ	Դասարան
1.	Ավ.Իսահակյան	Սեպտեմբեր	
	Օշական	Հոկտեմբեր	
2.	Մանկական Երկաթուղի	Հոկտեմբեր	
	Մուղդուսյան արվեստի կենտրոն	Նոյեմբեր	
3.	Անտարես հրատարակչություն	Փետրվար	
4.	Խնկո Ապոր գրադարան	Փետրվար	
5.	Բնության թանգարան	Ապրիլ	
6.	Գուրմե-Դուրմե շոկոլադի գործարան	Ապրիլ	
7.	Կենդանաբանական այգի	Մայիս	
8.	Մաչանենց տուն	Մայիս	
9.	Երկրաբանության թանգարան	Տարվա ընթացքում	
10.	Ա.Խաչատրյանի տուն-թանգարան	Տարվա ընթացքում	
11.	Մ.Սարյանի տուն-թանգարան	Տարվա ընթացքում	
12.	Խոր Վիրապ	Տարվա ընթացքում	
13.	Հ.Թումանյանի տուն-թանգարան	Տարվա ընթացքում	

13.Մրցույթներ

Հ/Հ	Թեմա	Դասարան	Պատասխանատու
1.	Լավագույն ընթերցող	3 դասարան	Դասվարներ
2.	Դաս-Վիկտորինա	2-րդ դաս. միջև	Դասվարներ
3.	Զվարթ տրամաբանություն	2-րդ դաս. միջև	Դասվարներ
4.	Հազարագանձ մայրենին	3-րդ դաս. միջև	Դասվարներ
5.	Ամենախելացին	4-րդ դասարանների միջև	Դասվարներ Փոխտնօրեն

14.Միջոցառումներ

Հ/Հ	Թեմա	Դասարան	Պատասխանատու
1	Հրաժեշտ Այբբենարանին	1	Դասվարներ
2	Երդման արարողություն	1	Դասվարներ
3	Հրաժեշտ տարրական դպրոցին	4	Դասվարներ

15.Սեմինարներ

Հ/Հ	Թեմա	Պատասխանատու	Ժամկետ
1	Գործնական աշխատանքների կարևորությունը ուսումնական գործընթացում		Սեպտեմբեր
2	Նախագծային աշխատանքի կազմակերպում		Հոկտեմբեր
3	Ֆիննական կրթական համակարգը		Նոյեմբեր